ევროკავშირი
საქართველოსთვის
ENPARD

GIPA
In hoc signo vinces

Նորարարական ջերմոց Մուրջախեթ Գյուղում

Սամցխե-Ջավախեթին Վրաստանի բարձրալեռնային շրջան է եւ ջերմոցի կառուցումը անշահավետ է համարվում: Սակայն Մուրջախեթ գյուղի բնակիչ Ենոք Բաբաջանյանը կոտրեց այս կարծրատիպը եւ կառուցեց նորարարական ջերմոց:

Ենոք Բաբաջանյանի մոտ ջերմոցի կառուցման գաղափարը Հյուսիսային Իռլանդիայում ուսումնական շրջագայության ժամանակ առաջացավ: Այցը Իռլանդիա Ախալքալաքի տեղական զարգացման խմբի (LAG) անդամների համար նախագծի՝ Եվրամիությունը՝ Վրաստանում գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման հարեւանական նախագծի՝ (ENPARD)-գյուղի զարգացման նոր մոտեցման նպաստումը Ախալքալաքիում, շրջանակներում իրագործվեց, որը հաջողությամբ է իրագործում Վրաստանի հասարակական գործերի ինստիտուտի, գյուղատնտեսության զարգացման եւ մասնագիտական ուսման բաժանմունքը (DRDVE/GIPA) արեւմտյան Կորկի զարգացման համագործակցության (Հյուսիսային Իռլանդիա) հետ համագործակցությամբ:

Նախագծի արդյունքում զբաղվեց՝3 տեղացի
Նախագծի ընդհանուր բյուջեն՝ 50,000 լարի
Եվրամիության ֆինանսավորումը՝ 32,500 լարի
Համաֆինանսավորումը՝ 17,500 լարի



«Հյուսիսային Իռլանդիայում տեսա, թե ինչպես էին ստանում կենսագազ եւ կիրառում այն կաթի արտադրության մեջ: Մասնագիտությունով շինարար-ինժիներ եմ, էլեկտրականությունից էլ հասկանում եմ եւ համոզված էի, որ իմ գաղափարը տեխնիկապես կիրականացնեի: Մնում էր ֆինանսների խնդիրը: Գրեցի նախագիծ, դիմեցի LAG-ին, որ անդամս էլ ինքս էի եւ շատ լավ գիտեի ռազմավարության եւ առաջնահերթությունների մասին», - ասում է նորարար ձեռնարկատերը:

Եվրամիությունը ֆինանսավորեց նախագիծը: Ձեռնարկատերը կառուցեց արեւի էլեկտրակայան եւ սկսեց արտադրել կենսագազ, 200 մ2 ջերմոց կառուցեց եւ Բելֆորդի ցեղատեսակի լոլիկ տնկեց:

MERCY CORPS

A place apart West Cork
West Cork DEVELOPMENT PARTNERSHIP

ELVA

ევროკავშირი
საქართველოსთვის
ENPARD

Ամառվա շրջանում, Ենոք Բաբաջանյանը Արեւի էլէկտրակայանի էներգիան էլեկտրաբաշխիչ ընկերությանն՝ «էնէէրգո պրո ջորջիա» է վաճառում 11,5 թեթրիով եւ նրանցից հիմնականում ձմռանը 18 թեթրիով գնում է: Հիմա ընկերությունը նրանց հանդեպ 180 լարի պարտք ունի: Ենոք Բաբաջանյանի խոսքերով՝ նրա նախագիծը Վրաստանում միակը եւ նորարարականն է այն տեսանկյունով, որ նա առաջինը օգտագործեց արեւի էլեկտրակայանը ջերմոցի համար եւ այսօր արդեն ուրիշ շահագրգիռ անձանց օգտակար խորհուրդներ եւ հանձնարարականներ է տախս:

Ձեռնարկատերը արդեն աղբից կենսագազ էլ է ստանում: Աղբը հատուկ ռեզերվուարում լցվում եւ այնտեղից բնական գազ է ստացվում: Ստացած կենսագազը օգտագործվում է ջերմոցում եւ տանը, իսկ մի մասը վաճառում է որպես կենսական պարարտանյութ:

Ամռան սեզոնին լոլիկի բերքը մոտ 5 տոննա կազմեց: Ենոք Բաբաջանյանը մտադրվում է ձմռանը աճացնել եւ յուրացնել կանաչի: Ջերմոցում քիմիկատներ չի օգտագործվում, նրա մթերքը բնական է:

Ձեռնարկատերը մտադրվում է ընդլայնել յուրացման շուկան եւ ընդհանրապես բիզնեսը: Նրա կարծիքով, շրջանին հենց նորարարական եւ բիզնեսի վրա կենտրոնացված նախագծեր է անհրաժեշտ, ինչը կապահովի կայուն տնտեսական զարգացում եւ նոր աշխատատեղերի ստեղծում:

Նախաձեռնությունը ֆինանսավորվել է ,Եվրամիությունը Վրաստանում գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման հարեւանական նախագծի՝ (ENPARD)-գյուղի զարգացման նոր մոտեցման նպաստումըե նախագծի շրջանակներում:

Նախագիծը իրագործում է Վրաստանի հասարակական գործերի ինստիտուտը, գյուղատնտեսության եւ մասնագիտական ուսման բաժանմունքը (DRDVE/GIPA): Նախագծի համագործակիցներն են Մերսի Քորփսը, ELVA հասարակական ներգրավվածությունը եւ արեւմտյան Կորկի զարգացման գործընկերությունը:

Եվրամիությունը աջակցում է գյուղատնտեսությանը եւ գյուղի զարգացմանը Վրաստանում ENPARD-ի ծրագրի օգնությամբ: Ծրագիրը իրագործվում է 2013 թվականից ընդհանուր բյուջեով՝ 179,5 միլիոն եվրո: ENPARD-ի հիմնական նպատակը Վրաստանում գյուղի աղքատության հաղթահարումն է: Ծրագրի առաջին փուլի առաջնահերթությունն էր գյուղատնտեսության զարգացման նպաստումը, իսկ երկրորդ եւ երրորդ փուլի նպատակն է գյուղում ապրող մարդկանց տնտեսական զարգացման հնարավորությունների բարձրացումը: Հավելյալ տեղեկությունների համար տես վեբ-կայքը՝ ***www.enpard.ge.***